ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 4 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով «Կրիստեխ» ՍՊԸ-ի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ «Կրիստեխ» ՍՊԸ-ն 2018թ. ապրիլի 16-ին դիմել է Սահմանադրական դատարան:

Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է. «ՀՀ քաղաքացիական դատավարության ՀՕ-247 օրենսգրքի 240 հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ ճանաչել

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին և 171-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի մայիսի 14-ի վճռով հայցը բավարարվել է մասնակի, «ՀայՓոստ» ՓԲ ընկերությունից հօգուտ «Կրիստեխ» ՍՊ ընկերության բռնագանձվել 5.336.000 ՌԴ ռուբլուն բռնագանձման պահին համարժեք ՀՀ դրամ, մաքսային ձևակերպումների համար վճարված 6.500 ՀՀ դրամը և փոխադրման համար վճարված 4.800 ՀՀ դրամ գումարը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2014 թվականի մայիսի 12-ի որոշմամբ «ՀայՓոստ» ՓԲ ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի մայիսի 14-ի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն Դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

ՀՀ վճռաբեկ քաղաքացիական դատարանի և վարչական պալատի 2014 թվականի հուլիսի 2-ի որոշմամբ «Կրիստեխ» ՍՊ ընկերության ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2016 թվականի փետրվարի 18-ի վճռով հայցը բավարարվել է, «ՀայՓոստ» ՓԲ ընկերությունից բռնագանձվել է 5.336.000 ՌԴ ռուբլուն համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև 6.500 ՀՀ դրամ՝ որպես մաքսային ձևակերպումների և 4.800 ՀՀ դրամ՝ որպես փոխադրման համար վճարված գումարներ, 6.000.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ «ՀայՓոստ» ՓԲ ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2016 թվականի փետրվարի 18-ի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ քաղաքացիական դատարանի և վարչական պալատի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է, ՀՀ վերաքննիչ քա-

ղաքացիական դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 11-ի որոշումը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

3. Դիմողը մատնանշում է, որ՝ «... ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը եղել է այն միակ դատական ակտը, որով Դիմողի հայցը մերժվել է և բերվել են հայցի հիմքում դրված փաստական կամ նյութաիրավական հիմնավորումները մերժելու փաստարկները: Սակայն, քանի որ այդ դատական ակտը կայացվել է ՀՀ բարձրագույն դատական ատյանի կողմից, ապա Դիմողը հնարավորություն չի ունեցել՝ այդ դատական ակտի պատճառաբանություններին ծանոթանալուց հետո վիճարկելու դրանք (իր դեմ բերված պատճառաբանությունները): Մինչդեռ, եթե այդ նույն պատճառաբանություններով Դիմողի հայցը մերժվեր առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանում, ապա Դիմողը կկարողանար փաստարկված ձևով այդ պատճառաբանությունները վիճարկել վերադաս դատարանում և ակնկալել, որ իր փաստարկները հաշվի կառնվեն»:

Դիմողը գտնում է, որ՝ «... ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի և իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության արդյունքում ստեղծվել է իրավիճակ, երբ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները վեճը լուծեն հօգուտ որևէ անձի, սակայն վճռաբեկ դատարանը բերի այնպիսի փաստարկներ, որոնք չեն բերվել ստորադաս դատարանների կողմից և, հիմնվելով այդ փաստարկի վրա, վեճը լուծի այդ նույն անձի դեմ: Նման դեպքում անձը, ի տարբերություն իր դատավարական հակառակորդի, զրկվում է իր դեմ կայացված դատական ակտի պատճառաբանությունները վիճարկելու որևէ հնարավորությունից, ինչը իրեն դնում է էապես ավելի վատ դրության մեջ իր դատավարական հակառակորդի համեմատ»:

Միաժամանակ դիմողի կարծիքով՝ այն դեպքերում, երբ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները վեճը լուծել են նույն ձևով, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, փոփոխում ու վերջնականապես վեճը լուծում է այլ կերպ, ապա նման դեպքում Վճռաբեկ դատարանը վերանայում է ոչ թե դատական ակտերը, այլ՝ գործը:

4. Ելնելով դիմումի և դատական ակտերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի սեպտեմբերի 22-ի ՍԴՈ-832 որոշումը: Այսպես, Սահմանադրական դատարանի՝ հիշատակված որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

Մասնավորապես, նշված որոշման մեջ Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ՝ «... 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, նախատեսելով ՀՀ վճռաբեկ դատարանի խնդրո առարկա լիազորությունը, միաժամանակ, որպես այդ լիազորության կիրառման իրավաչափությունն ապահովող երաշխիք ամրագրում է դրանից օգտվելու չափորոշիչները: Այն է՝ ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված լիազորությունը կարող է կիրառել բոլոր այն դեպքերում, երբ ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները թույլ են տալիս վճռաբեկ դատարանին ստորադաս դատարանի ակտից տարբերվող ակտ կայացնելու, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից»:

ՀՀ սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ «... ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը փոփոխելը կարող է տեղի ունենալ բացառապես հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությամբ, որոնք, մի կողմից, վճռաբեկ դատարանին պահում են իր սահմանադրաիրավական կարգավիճակում, մյուս կողմից՝ երաշխավորում են արդար դատաքննության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները: Դրանք են.

ա) ՀՀ վճռաբեկ դատարանը հետազոտության առարկա չի դարձնում որևէ փաստական հանգամանք, այլ իր սահմանադրաիրավական կարգավիճակին համահունչ անդրադառնում է միայն իրավունքի հարցերին,

բ) ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները պետք է հնարավորություն տան վճռաբեկ դատարանին կայացնելու ստորադաս դատարանի ակտից տարբերվող ակտ,

գ) վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը փոփոխելը պետք է բխի արդարադատության արդյունավետության շահերից,

դ) այդպիսի որոշման հիմք կարող է հանդիսանալ միայն ստորադաս դատարանի կողմից նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը»:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«Կրիստեխ» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

4 մայիսի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/2-15